

## ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏ ՀԱՅԵԼԻՆ

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»  
արխիվային փաստաթղթերի բազմահատոր ժողովածուի  
շնորհանդէսը\*

Ես կը խոստանամ՝ որքան ալ շունչ ունենամ,  
Տէրը կամենա, կատարիմ այս աշխատանքը:  
Երվանդ Փամբուկյան

2016 թվականի փետրվարի 10-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտի «Մեսրոպ Աջճեան» գիտական կենտրոնի սրահում տեղի ունեցավ **Երվանդ Փամբուկյանի «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»** արխիվային փաստաթղթերի բազմահատոր ժողովածուի շնորհանդէսը: Ներկա էին ՀՅԴ Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ **Արմեն Ռուստամյանը**, ՀՅԴ Բյուրոյի անդամ **Կիրո Մանոյանը**, Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը**, Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանը**, անվանի պատմաբաններ, կուսակցական գործիչներ և բազմաթիվ հյուրեր:

Շնորհանդէսը խորհրդանշական էր նրանով, որ Հայաստանում առաջին անգամ գիտական պատշաճ մակարդակով ներկայացվում և արժևորվում էր ՀՅԴ արխիվների հավաքման, պահպանության ու տպագրության շուրջ 100-ամյա դժվարին գործը՝ մեր օրերում այն ընթերցող հասարակությանը ներկայացրած վաստակաշատ գիտնական, կուսակցական և ազգային գործիչ **Երվանդ Փամբուկյանի** սովորածավալ հատորների տեսքով:

Բացելով Հայոց Նոր պատմության ամենաբարդ ու ամենաողբերգական ժամանակաշրջանի՝ 1890-1915 թթ. վավերագրերն ամփոփող **«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»** ժողովածուի շնորհանդէսը՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս **Աշոտ Մելքոնյանը** նկատեց, որ ընթերցողն ապշում է հենց միայն այն գաղափարից, որ այդ ահռելի աշխատանքը կատարվել է մեկ անձի կողմից, ով որպես խմբագիր, ներկայացնում է իր տեսակետն ու գնահատականը և միևնույն ժամանակ հետազոտողին ազատ է թողնում սեփական մտորումների ու վերլուծությունների հետ: Ա. Մելքոնյանն արձանագրեց, որ հա-

\*Ընդունվել է տպագրության 25.02.2017:

Թ. (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (57), ԽՈՍՎԱՐ-ՆԱՐԵՎ, 2017  
Վ.Վ. համահայկական հանդես

տորներում ներկայացվող նյութերը ոչ միայն Հայ Յեղափոխական Դաշնակցությանն են վերաբերում, այլ նաև 19-20 դդ. հայ ազգային-ազատագրական պայքարին: Դրանով ընթերցողի առաջ հասնում է հայ ժողովրդի Նոր պատմության վերջին շրջափուլի ամբողջական պատկերը:

Ա. Մելքոնյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց նաև այն փաստի վրա, որ ժողովածուի 12-րդ հատորը թեև կազմված է ժամանակագրական կարգով, բայց նրա խմբագիրը, միահյուսելով նոր հայտնաբերված փաստերը, ամբողջական պատկերացում է տվել հայ ժողովրդի համար ամենաօրհասական պահի՝ Հայոց մեծ եղեռնի մասին:

Արխիվային գործի կազմակերպման նպատակով ՀՅԴ կատարած աշխատանքների հարուստ տարեգրությունը ներկայացրեց «ՎԷՆ» հանդեսի խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր **Գևորգ Խուդինյանն** իր «ՀՅԴ արխիվների ողիսականը» գիտական զեկուցման մեջ: Անդրադառնալով Ե. Փամբուկյանի անգնահատելի աշխատանքին՝ նա ուրվագծեց դրա համար հիմք ծառայած ՀՅԴ արխիվների կուտակման, պահպանության ու երկրե-երկիր տեղափոխության պատմության հիմնական հանգրվանները: Գ. Խուդինյանը նշեց, որ ՀՅ Դաշնակցությունը միակ ազգային կուսակցությունն է, որ սեփական արխիվն ունի, որի հարուստ նյութերը ոչ միայն անգնահատելի սկզբնաղբյուրներ են, այլև նրա անցած պատմության անբաժանելի մասը: Նա խոսեց այն մասին, թե ինչպես հեռավոր 1893 թվականին ժխտում հաստատվելուց հետո կուսակցության հիմնադիրներից **Ռոստոմը** (Ստեփան Զորյան) «Դրօշակ»-ը խմբագրելու հետ միասին զբաղվում էր Շվեյցարիայի ազատ միջավայրում ՀՅԴ փաստաթղթերը հավաքելու, կուտակելու և պահպանելու գործով: Քիչ անց՝ կուսակցության գործունեության տասնամյակի հետ կապված, **Քրիստափոր Միքայելյանը** իր զինակից ընկերներին հանձնարարում է գրել իրենց հուշերը, բայց այդ ժամանակ գործը կիսատ է մնում: Սակայն իր համառության շնորհիվ Ռոստոմը կարողանում է պահպանել ժխտում ստացվող նյութերը, դասավորում է դրանք, նշում, թե ով է կոնկրետ գրության հեղինակը և այլն: Սա ՀՅ Դաշնակցության արխիվային գործը կազմակերպելու առաջին քայլն էր: Ռոստոմի շնորհիվ էր, որ Եղեռնի նախօրեին՝ 1914 թ. վերջերին, սնդուկների մեջ դասավորվեցին ու Կ.Պոլսից Սոֆիա տեղափոխվելով՝ ի վերջո ժխտում հանգրվանեցին «Ազատամարտի» խմբագրության շենքում պահվող Արևմտյան Բյուրոյի և Հայաստանի Բյուրոյի Կ. Պոլսի հատվածի կարևոր վավերագրերը, նախքան դրանց մնացած մասի բռնագրավումը 1915 թ. ապրիլի 11-ի գիշերը: Իսկ ժխտում հասնելուց հետո Ռոստոմը փաստաթղթերի պահպանման վերաբերյալ կոնկրետ հանձնարարություններ է տվել պատերազմի տարիներին կուսակցության կենտրոնատեղիում փաստորեն մենակ մնացած **Աստոն Գոշին**, և վերջինս, 1915-ից սկսած, զբաղվում էր նաև արխիվային գործով: Ուշագրավ է և այն փաստը, որ 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունից հետո Պետերբուրգում Ռոստոմը առաջին հերթին մտնում է հեղափոխության արդյունքում բացված ցարական Օլսրանայի արխիվները, որտեղից հանում է ՀՅ Դաշնակցության գործիչներից ժամանակին բռնագրավված թղթերը, մասնավորապես՝ կուսակցության 1890 թ. **Մանիֆեստի** բնօրինակը:

Հայաստանի հանրապետության հիմնումից հետո՝ կուսակցության 9-րդ ընդհանուր ժողովում՝ 1919 թվականին, ստեղծվում է երեք հոգուց բաղկացած (Վարանդյան, Վրացյան, Ռուբեն) հատուկ մարմին, որը պետք է զբաղվեր ՀՅԴ արխիվները կարգի բերելու և հրատարակելու գործով: Սակայն այդ գործը զանազան պատճառներով նորից կանգ է առնում:

Եվ միայն 1920-ական թվականներից սկսած՝ «Հայրենիք» ամսագիրը սկսում է պարբերաբար հրատարակել դաշնակցական գործիչների հիշողությունները, որոնք գրի էր առնում **Նիկոլ Աղբալյանը**, իսկ 1933 թվականին նրան է միանում Սիմոն Վրացյանի խմբագրած «ՎԿՎ»-ը:

1930-ական թվականներին Սիմոն Վրացյանը մասամբ կատարեց 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումը՝ հրատարակելով «**Դիան Հ. Յ. Դաշնակցութեան**» փաստաթղթերի ժողովածուի 2 հատորները: Նույն տարիներին այդ գործը շարունակեց **Աբրահամ Գյուլխանդանյանը**: Նա առաջինն էր, որ կանոնավոր ձևով դասավորեց ու համարակալեց ՀՅ Դաշնակցության արխիվների թղթածրարները: Այդ ժամանակ էլ արխիվը ժնկից տեղափոխվեց Փարիզ, որտեղ մնաց Երկրորդ աշխարհամարտի ընթացքում, որից հետո այն հանգրվանեց ԱՄՆ-ում՝ սկզբում «Հայրենիք»-ի խմբագրության շենքում և ապա Բոստոնի արվարձան **Ուոթերթաունում**, որտեղ էլ գործում է մինչ օրս:

1980-ականներից սկսվել է ՀՅ Դաշնակցության արխիվները ներառող «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» ժողովածուի առաջին հատորների հրատարակությունը: Սիմոն Վրացյանի սկսած գործը շարունակել և առաջին չորս հատորները հրատարակել ու հինգերորդ հատորի մի մասը տպագրության է նախապատրաստել նրա աշակերտը՝ **Հրաչ Տասնապետյանը**, որի մահից հետո այդ մեծ գործն իր ուսերին է վերցրել և բարելավել իրականացնում է Երվանդ Փամբուկյանը:

Վերջում Գ. Խուդինյանը ընդգծեց, որ ներկայացվող բազմահատորյակն ըստ էության **առաջնային սկզբնաղբյուրների** ժողովածու է, քանզի 1890-1915 թթ. Հայոց պատմության առանցքային սուբյեկտը եղել է Հ Յ Դաշնակցությունը, և Հայոց քաղաքական պատմության հայկական սկզբնաղբյուրների հիմնական մասը հենց այս բազմահատորյակում գետեղված նյութերն են, մինչդեռ հայ հետազոտողները մինչ օրս հիմնականում օգտագործում էին մեր մասին օտարների թողած արխիվային նյութերը, որոնցում սուտն ու ճշմարտությունը կողք-կողքի են:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը**: Նա իրավացիորեն նկատեց, որ արխիվներն այն հենասյուներն են, որոնց վրա կերտվում է պատմությունը: Նախարարը բարձր գնահատեց Երվանդ Փամբուկյան գիտնականի ու ազգային գործչի ներդրումը մեր ժողովրդի Նոր պատմության վավերագրերի ուսումնասիրության և հրատարակության գործում:

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» ժողովածուի 12-րդ հատորը՝ որպես Հայոց ցեղասպանության պատմության սկզբնաղբյուր» թեմայով զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս **Ռուբեն Սաֆրաստյանը**: Նա կարևորեց Հայոց ցեղասպանության նախապատմության վերաբերյալ հատորում կուտակված հարուստ նյութերը, որոնք համոզիչ փաստերով ցույց

են տալիս, որ Առաջին աշխարհամարտի սկզբի առաջին երեք ամիսների ընթացքում արդեն սկսվել էր ցեղասպանության իրականացման երիտթուրքական ծրագրի գործադրումը: Հատկանշական է, որ այդ առումով երիտթուրք պարագլուխները կարևոր դեր էին հատկացնում երկրի մահմեդական բնակչությանը քրիստոնյա հայերի դեմ տրամադրելուն: Ռ. Սաֆրաստյանի բնորոշմամբ՝ սույն հատորը պետք է ընկալել ոչ միայն որպես Հայոց պատմության մի ժամանակահատվածի վավերագրերի ժողովածու, այլ նաև որպես կարևոր փաստավավերագրական սկզբնաղբյուր՝ ցեղասպանագիտության տեսակետից: Հատորը արտացոլում է նաև ՀՅԴՖ նախնականության միջազգային գործունեությունը ցեղասպանության ժամանակահատվածում: Զեկուցողը որպես օրինակ նշեց 12-րդ հատորում տեղ գտած՝ 1917-ին Սոցիալիստիկ Ստոկհոլմի համաժողովին ներկայացված 35 էջանոց փաստաթուղթը: Դրա բովանդակությունից պարզ է դառնում, թե ինչպես է կուսակցությունը կարողացել արագորեն վերականգնել կատարվածի ընդհանուր պատկերը և ներկայացնել այնպես, որ փաստաթուղթը հասկանալի լինի ժամանակի առաջադեմ հասարակայնության համար:

Շնորհանդեսին իր ողջունի խոսքն ասաց նաև ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր **Էդիկ Մինասյանը**: ՀՅԴ արխիվների՝ ընթերցողի դատին հանձնված հերթական՝ 12-րդ հատորը նա որակեց որպես ամփոփ աշխատություն, որը գալիս է՝ լրացնելու ցեղասպանության պատմության արդեն եղած ուսումնասիրությունների թողած բացը: Բանախոսը կարևորեց, որ սույն հատորում ներկայացվում են ոչ միայն հայոց Մեծ եղեռնին նախորդած պատմական իրադարձությունները, այլ նաև այդ ողբերգությունը վերապրածների առանձին հուշագրությունները և արխիվային փաստաթղթերը: Նա առանձնացրեց **նախ**՝ Եղեռնը վերապրածների փաստաթղթերի հիմնական մասը, **սպա**՝ երկրորդ հատվածը՝ Եգիպտոսում հանգրվանած մուսալեռցիների գործունեությանը վերաբերող արխիվային փաստաթղթերը, **երրորդ**՝ վերապրածների՝ Եղեռնից հետո գրած հուշերը, **չորրորդ**՝ Հալեպում հանգրվանած վերապրածների թղթերը: Է. Մինասյանի կարծիքով՝ հատորում ներկայացվող պատմական վավերագրերը թույլ են տալիս ծանոթանալու ժամանակին անտեսված այն փաստերին, որոնք հաճախ վրիպել են ուսումնասիրողների աչքից: Նա ընդգծեց նաև, որ Ե. Փամբուկյանը որպես գրքի խմբագիր, ոչ միայն փաստահավաք է, այլ նաև հետազոտող, նյութերը վերլուծող, ծածկագրերի, գաղտնագրային անունների վերծանող:

ՀՅԴ պատմության թանգարանի ստեղծման և ՀՅԴ արխիվների հետ միասին Ֆրանսիայում հանգրվանելու պատմափուլին անդրադարձավ ՀՅԴ թանգարանի տնօրեն, պատմաբան **Անուշ Ամսեյանը**: Նա կարևորեց ՀՅԴ թանգարանի դերը կուսակցության մասունքները կործանումից փրկելու գործում: Ա. Ամսեյանը ներկայացրեց նաև, թե ինչ դժվարությունների գնով են փաստաթղթերին զուգահեռ փրկվել և ի մի բերվել դաշնակցական գործիչների ու մտավորականների հուշերը, անձնական իրերը, և այլն: Նա ընդգծեց, որ թեև թանգարանի ստեղծման գաղափարն առաջացել էր Ռոստոմի մտքում, բայց այն իրագործելու բուն քայլն արվեց 1915 թվականին, քանի որ այդ ժամանակ այնքան նյութ էր հավաքվել, որ

դրանք փաստաթղթերից առանձնացնելու անհրաժեշտություն առաջացավ: Բացի կուսակցական մատուցներից՝ թանգարանում հավաքվել են նաև ժամանակի ազգային մշակույթի տարրեր՝ դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ: 1930-ականներին թանգարանային նմուշները հավաքվեցին Փարիզում, որտեղ Մոսկովայի արվարձանում ձեռք բերված ՀՅԴ Տանը հանգրվանեցին տասնամյակներ շարունակ ժնկում հավաքված և որպես երեք մշակութային օջախ կազմավորված ՀՅԴ արխիվը, գրադարանը և ՀՅԴ պատմության թանգարանը: 1947-1948 թթ. արխիվը տեղափոխվեց Բոստոն, իսկ թանգարանն ու գրադարանը մնացին Փարիզում մինչև 2006 թվականը, երբ ՀՅԴ թանգարանը տեղափոխվեց Երևան: 2007-ին բացվեց առաջին ցուցադրանք, որի համար ընտրվեց շատ ընդգրկուն թեմա՝ «Հայաստանի առաջին հանրապետության պատմությունը»: Դա արվեց տարածքի սղության և այն պատճառով, որ հաջորդ տարի լրանալու էր Հայաստանի առաջին հանրապետության 90-ամյակը: Թանգարանը ներառում է ոչ միայն անձնական իրեր, այլ նաև լուսանկարներ և որոշ փաստաթղթեր: Ա. Ամսեյանը հույս հայտնեց, որ ապագայում թանգարանը վերջապես սեփական շենքը կունենա, և հնարավոր կլինի 100 տարվա ընթացքում հավաքված ցուցանմուշներն ամբողջությամբ ցուցադրել:

Շնորհանդեսի վերջում՝ մինչև «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» բազմահատորյակի խմբագրի ելույթը, ՀՅԴ Բյուրոյի անդամ **Կիրո Մանոյանը** ներկայացեց Երվանդ Փամբուկյանի գիտական պատկառելի կենսագրությունը: Այնուհետև Ե. Փամբուկյանն իր շնորհակալական խոսքում վարակիչ պարտավորություն և պատասխանատվություն ստանձնեց շարունակելու Հայոց պատմության ամենադժվարին ժամանակահատվածն արտացոլող, ծայրահեղ դժվարությունների գնով փրկված ՀՅԴ արխիվներն ուսումնասիրելու և հրապարակելու գործը:

Վերջում «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» ժողովածուի 12-րդ հատորին իր գնահատականը տվեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն **Սուրեն Մանուկյանը**՝ ընդգծելով, որ սույն հատորով մեծ ներդրում է արվել ցեղասպանագիտության բնագավառում: Նրա կարծիքով՝ երկար տարիներ Հայոց ցեղասպանությունը դիտվել է աշխարհաքաղաքական շահերի կամ մակրոպատմության տեսանկյունից, սակայն այն նաև միկրոպատմությունների համադրություն է, ինչը փայլուն կերպով ներկայացված է տվյալ հատորում: Վերապրածների հուշագրությունների, տարբեր վայրերում գայմագամների, ոստիկանապետների, այլ պաշտոնյաների գործողությունների տեսքով պատկերված են ժամանակի իրադարձությունները: Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության ասպարեզում իր ներկա հատորով կատարած վիթխարի ներդրման համար Երվանդ Փամբուկյանը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից պարգևատրվեց «**Ձեյսն Բրայս**» հուշամեդալով:

Շնորհանդեսը ավարտվեց ներկաների և երևելի գիտնականի միջև հարց ու պատասխանով: Բազմամարդ դահլիճում հյուրերի հոծ բազմության ներկայությամբ անցկացված «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» ժողովածուի շնորհանդեսը ցույց տվեց, որ ՀՅԴ գործիչ-

ների հաջորդական սերունդների կողմից փրկված և այժմ պատմաբան-գիտնականների դատին ներկայացվող ՀՅԴ պատմության վավերագրերը եղել ու մնում են հայ ժողովրդի պատմական ժառանգության անբաժանելի մասը և միևնույն ժամանակ մեզանով հետաքրքրվող օտար ուսումնասիրողների մեծ ուշադրության առարկան: Այսօր էլ նրանք ոչ միայն բաց են ուսումնասիրողների համար, այլև իրենց զգալի մասով արդեն հրապարակվել են՝ դրանով իսկ դյուրացնելով վերջիններիս գործը: Եվ ՀՅԴ գործիչների հաջորդական սերունդների կողմից կատարված տասնամյակների աշխատանքը շարունակող Երվանդ Փամբուկյանը այսօր էլ լի է իր մեծ գործը ավարտին հասցնելու ավյունով ու վճռականությամբ:

Սիրանուշ Գ. Հովհաննիսյան  
*Բանաս. գիյր. թեկն.*

Siranush G. Hovhannisyan

**AUTHENTIC REFLECTION OF AR FEDERATION ARCHIVES**

Presentation of the multivolume collection of archival documents  
entitled “Materials for the history of AR Federation”

Сирануш Г. Оганисян

**ПОДЛИННОЕ ОТРАЖЕНИЕ АРХИВОВ АРФ ДАШНАКЦУТЮН**

Презентация многотомного сборника архивных документов  
«Материалы по истории АРФ Дашнакцутюн»